ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 թվականի մարտի 17-20-ը
ք. Սինգապուր /Սինգապուրի Հանրապետություն/ գործուղման
արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն.

Նաիրա Կարապետյան
Վահագն Լալայան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության պետ և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներդրումային քաղաքականության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Սինգապուր, Սինգապուրի Հանրապետություն, 2019 թվականի մարտի 17-20-ը

4. Հրավիրող կողմը.

Սինգապուրի Հանրապետության նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքման շուրջ բանակցությունների յոթերորդ փուլին մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները.

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների յոթերորդ փուլի ընթացքում քննարկվել են վերոհիշյալ Համաձայնագրի նախագծի առանձին բաժիններ, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առևտրի դյուրացումն ու խթանումը, առևտրի պաշտպանիչ միջոցները, էլեկտրոնային առևտուրը, պետական գնումները, մտավոր սեփականությունը և այլ բնագավառներին առնչվող խնդիրներ: Համաձայնագրի շուրջ վարվող բանակցությունների ընթացքում հիմնականում քննարկվել են Համաձայնագրին կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ, ինչպես նաև նշված ցանկերում ներառված ապրանքների ծագման երկրի որոշման չափորոշիչները: Վերոհիշյալ ցանկերում հայկական կողմից

ներկայացվել են ՀՀ համար արտահանման հետաքրքրություն ունեցող մի շարք ապրանքատեսակներ:

Համաձայնագրի նախագծի լրամշակված տարբերակը՝ ըստ բաժինների, համաձայնեցված էր Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համապատասխան փորձագետների միջև կայացած խորհրդակցությունների ժամանակ:

Ներդրումների և ծառայությունների ազատ առևտրի համաձայնագրի մասով տեղեկացնում ենք, որ մինչև տվյալ բանակցային փուլը սինգապուրյան կողմի հետ աշխատանքային կարգով (էլեկտրոնային եղանակով) արդեն իսկ ձևավորվել էր համաձայնագրի տեքստը, այն շրջանառվել էր աշխատանքային կարգով շահագրգիռ մարմինների միջև և ձևավորվել էր հայկական կողմի դիրքորոշումը: Արդյունքում երկկողմ ծառայությունների և ներդրումների մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) բուն տեքստի առնչությամբ հանգել էինք մի շարք չպարզաբանված հարցերի:

Բանակցությունների ընթացքում ըստ էության համաձայնեցվել են տեքստի հիմնական կարևոր կետերը, ինչի արդյունքում Համաձայնագրի 6 մասերից 2-ը (Ընդհանուր դրույթներ և սահմանումներ, Թափանցիկություն) վերջնականացվել են: Եվս 1-ը (Պետություն-ներդրող վեճերի լուծման կարգը) քննարկվում է ԵԱՏՄ-Սինգապուր ազատ առևտրի հիմնական համաձայնագրում, որտեղ վերջնականացվելուց հետո այն նույնությամբ կներառվի Համաձայնագրում: Մնացած 3 մասերում առկա են որոշակի հարցեր, կապված ՀՀ օրենսդրությամբ պայմանավորված դրույթներով, ինչի շուրջ ևս մեկ անգամ ներքին քննարկում ունենալու նպատակով սինգապուրյան կողմը խնդրել է լրացուցիչ ժամանակ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ այդ քննարկումների արդյունքում ի հայտ եկած նկատառումները կպարզաբանվեն մինչև ս.թ. ապրիլի 30-ը:

Միաժամանակ քննարկումներ են իրականացվել «շուկայի հասանելիության» շուրջ, ինչը ենթադրում է երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ոլորտների ազատականացում՝ ծառայությունների առևտրի և ներդրումների մասով: Այս կապակցությամբ արդեն իսկ սկսվել են աշխատանքներ, մասնավորապես՝ նախատեսվում է հարցը քննարկել պետական և մասնավոր տարբեր կառույցների հետ՝ բացահայտելու այն ոլորտները, որոնք հետաքրքիր են հայ գործարարներին Սինգապուրում գործունեություն ծավալելու տեսանկյունից: Համապատասխան ոլորտների բացահայտումից հետո աշխատանքներ կտարվեն սինգապուրյան կողմի հետ այդ ոլորտներում առկա սահմանափակումների վերացման ուղղությամբ: Սինգապուրյան կողմը իր կողմից կներկայացնի նմանատիպ ոլորտների ցանկը:

Բացի վերոնշյալ հարցերից, այցի ընթացքում հանդիպումներ եմ ունեցել նաև Սինգապուրի արդյունաբերության և առևտրի նախարարության՝ Հայաստանի մասով պատասխանատու պաշտոնյաների հետ: Մասնավորապես՝ Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի դեպարտամենտի տնօրենի գլխավոր խորհրդական Միշել Օնգի

և այլ ներկայացուցիչների հետ: Քննարկվել են երկկողմ տնտեսական և ներդրումային համագործակցության հետագա զարգացման հարցեր, մասնավորապես.

- Քննարկվել է երկուստեք ներդրումային համաժողովներ և գործարար առաքելություններ կազմակերպելու հնարավորությունները: Սինգապուրյան կողմը նշել է, որ Սինգապուր ներդրումներ ներգրավվելու համար պատասխանատու է Enterprise Singapore ընկերությունը, մինչդեռ արտերկրում սինգապուրյան ներդրումներին աջակցող կառույցը Economic Development Board-ն է: Հայկական կողմից որպես բիզնես առաքելությունների համար պատասխանատու առաջարկվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, Բիզնես Արմենիան, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը և ՀՀ արդյունաբերողների և գործարարների միությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ համապատասխան ներկայացուցիչների հետ հայկական կողմը կլինի կապի մեջ և պետության ներսում դիրքորոշումները հստակեցնելուց հետո քննարկումներ կընթանան կոնկրետ ժամկետներ սահմանելու ուղղությամբ: Սինգապուրյան կողմը նշել է նաև, որ 2 տարի առաջ փորձել է նման գործարար առաքելություն կազմակերպել, սակայն այն չի կայացել, քանի որ իրենց պատվիրակության որոշ անդամներ (հնդիկներ) վիզայի հետ կապված խնդիր են ունեցել:
  Քննարկվել է նաև մոտ ապագայում որևէ պաշտոնական այցի շրջանակում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Սինգապուրի արդյունաբերության և առևտրի նախարարության միջև փոխըմբռնման հուշագիր ստորագրելու հնարավորությունը:
- Քննարկումների ժամանակ նշվել է, որ հայկական կողմին հետաքրքրում է Սինգապուրի փորձը Doing business-ի և էլեկտրոնային կառավարման ոլորտում, ինչին ի պատասխան սինգապուրյան կողմը առաջարկել է քննարկել Սինգապուրում թրեյնինգներ կազմակերպելու հնարավորությունը: Կողմերը պայմանավորվել են այդ տեղեկատվությունը փոխանցել իրենց երկրի համապատասխան կառույցներին հետագա համագործակցությունն ապահովելու նպատակով:
- Անդրադարձ է կատարվել նաև նախկինում ավիացիայի ոլորտում ձեռք բերված պայմանավորվածություններին, համաձայն որի պետք է բացվեր Սինգապուր-Երևան ուղիղ չվերթը, ինչպես նաև Հայաստանի բուսաբանական այգին սինգապուրցիների կողմից վերակառուցման խնդրին, ինչի արդյունքում վերջինս պետք է վերանվանվեր Agnes Joaquim (ի պատիվ հայկական ծագմամբ սինգապուրցի Աշխեն Հովակիմյանի): Սինգապուրյան կողմը պրոցեսը արագացնելու նպատակով խոստացել է փոխանցել այդ տեղեկատվությունը իրենց համապատասխան կառույցներին, որոնք կկապվեն Հայաստանում իրենց գործընկերների հետ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Համաձայնագրի շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների, ինչպես նաև Սինգապուրի Հանրապետության առանձին ոլորտների մասով փորձագետներ:

Ոլորտային քննարկումների ժամանակ ներկայացվել են Կողմերի հիմնական տարաձայնությունները՝ Համաձայնագրի նախագծի առանձին բաժինների վերաբերյալ և արդյունքում մի շարք հարցերի ուղղությամբ կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն:

Մասնավորապես՝

Իրավական և հորիզոնական պարտավորությունները գլխի քննարկման ժամանակ Կողմերը քննարկեցին «Ինստիտուցիոնալ և ընդհանուր դրույթներ» բաժնի «Համատեղ կոմիտե» և «Որոշումների ընդունում» հոդվածների միավորման հարցը:

Կողմերը մանրամասն քննարկել են նաև «Ինստիտուցիոնալ և ընդհանուր դրույթներ» բաժնի հետևյալ հոդվածները՝ «Հարկում», «Ընդհանուր բացառություններ» և «Բացառություններ՝ ելնելով անվտանգության նկատառումներից»: Վերոնշյալ բոլոր հոդվածների մասով դեռևս պահպանվում են կողմերի սկզբունքային տարաձայնությունները:

«Վեճերի լուծում» բաժնում կողմերը կարողացան համաձայնություն ձեռք բերել արբիտրաժային խմբի նախագահի նշանակման, ինչպես նաև վերոնշյալ խմբի կողմից նախնական և վերջնական հաշվետվությունների ներկայացման, փոխհատուցման տրամադրման կամ օգուտների տրամադրման ժամկետների հարցերում:

Ապրանքների առևտուր գլխի քննարկման ընթացքում Կողմերը համաձայնության եկան ձեռք բերեցին ամբողջ գլխի մասով՝ բացառությամբ «Ինքնաթիռների ներմուծում՝ վերանորոգումից հետո» հոդվածի: Համաձայմագրին կից ապրանքների ցանկերի մասով, որոնց հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ, պայմանավորվածություն ձեռք բերվեց մի շարք ապրանքների մասով մաքսատուրքի իջեցման վերաբերյալ:

Ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների գլխի քննարկման ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց թվով 6 հոդվածների մասով՝ «Երրորդ կողմի հայտարարագիր», «Սակագնային արտոնությունների տրամադրման մերժում», «Ծանուցումներ» «Ծագման հավաստման նպատակով այց», «Ծագման կանոնների գծով ենթակոմիտե» և «Փոխադրվող կամ պահպանման մեջ գտնվող ապրանքներ»:

Առևտրային պաշտպանիչ միջոցներ գլխի քննարկման արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ամբողջ գլխի մասով: Երկողմանի պաշտպանիչ միջոցների մասով կողմերը պայմանավորվեցին, որ նման միջոցներ կարող են

կիրառվել անցումային ժամանակաշրջանի ընթացքում, որն ավարտվում է յուրաքանչյուր ապրանքի նկատմամբ ազատականացման ժամանակաշրջանի ավարտի պահից 7 տարի հետո:

Էլեկտրոնային առևտուր գլխի քննարկման արդյունքում Կողմերի միջև համաձայնություն ձեռք բերվեց «Սպառողների շահերի պաշտպանություն», «Անձնական տվյալների պաշտպանություն» և «Համագործակցություն» հոդվածների մասով:

Պետական գնումների գլխի քննարկման արդյունքում չհամաձայնեցված մնացին այն հոդվածները, որոնց համաձայնեցումը կապված է նշյալ գլխի նկատմամբ վեճերի լուծման գործընթացի կիրառման հարցի հետ:

Մտավոր սեփականություն գլխի մասով կողմերը ավարտեցին բանակցությունները: Վերոնշյալ գլխի տեքստը ամբողջությամբ համաձայնեցված է:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Բանակցությունների ընթացքում կողմերը հայտարարեցին, որ նշված բանակցային փուլը վերջին պաշտոնական փուլն էր:

Կողմերի միջև ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների յոթերորդ փուլի արդյունքներով կազմված Արձանագրություն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Համաձայնագրի տեքստի չհամաձայնեցված հոդվածների մասով առաջարկվեց, որ կողմերն անցկացնեն լրացուցիչ միջխորհրդատվական քննարկումներ:

Շրջակա միջավայրի մասով պայմանավորվածություն ձեռք բերվեց անցկացնել խորհրդակցություն 2019 թվականի ապրիլի 3-4-ը ք. Մոսկվայում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության Եվրասիական տնտեսական միության
և արտաքին առևտրի վարչության պետ
Նաիրա Կարապետյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության ներդրումային քաղաքականության
վարչության պետ
Վահագն Լալայան

26.03.2019 թ.